



Ա. ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

ԲՐՈՒՍԱՅԻ ԾՐՋԱՆԻ ՀԱՅՆԵՐԸ*

(ԻՐԵՆՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ և ՀՈԳԵՈՐ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ)

Ա. ՀԱՅՆԵՐԸ ԲՐՈՒՍԱՅԻ ՄԵՋ ՍՍՄԱՆՑԻՆԵՐՈՒ ԳՐԱՎՈՒՄԵՆ ԱՌԱՋ

Բրուսա Բյուզանդական տիրապետության շրջանին կարևոր և մեծ քաղաք մը չէր, այլ երկրորդական վայր մը, ուր հայ գաղթականներ հավանորեն գոյություն ունեին, ինչպես Փոքր Ասիոյ ամեն մասերուն մեջ, ամենն արևմտյան ծայրին մինչև Հայաստանի սահմանը, նույնիսկ շատ կանուխ ժամանակներին, այսինքն է, և Թ դարերին սկսյալ:

Դժբախտաբար հատուկ հայ գաղութին վերաբերյալ որոշ հիշատակություններ չունինք, սակայն մակարեւրաբար դիտարկել հետևեցնել, թե ինչպես Անատոլիան բազմաթիվ քաղաքները հայ գաղութներ ունեցած են, նույնպես նաև Բրուսա, Բյուզանական Ողիմպոս լեռան ստորոտը շինված այս քաղաքը, ունեցած է հայ գաղութ մը:

* Վերջերս ամերիկահայ մը նախաձեռնարկ եղած էր իր նյութական ձեռնարկությամբ պատրաստել ապուլու և հրատարակելու Արևմտյան Փոքր Ասիոյ գրեթե բոլոր հայաբնակ վայրերու գաղութներուն պատմությունը:

Այս նպատակով կազմված էր Հայկալի մեջ հանձնախումբ մը, որուն մինչև հիմա կատարած աշխատանքին մասին տեղեկություն չունիմ:

Նպատակ մը բերելու համար այս գործին, Բրուսայի հայ գաղութին մասին մոտավորապես երեսուն տարի առաջ պատրաստած մեկ աշխատությունն է, որ ցարդ անտիպ կմնա, մաս մը հրատարակության կուտամ, հուսալով որ դուրսն օգուտ մը բնծայած կըլլամ դիրքը պատրաստողներուն: Ա. Ա.:

Մասնավորապես հիշատակելի է, որ Ողիմպոս լեռը, ինչպես հեթանոսական, նույնպես քրիստոնեական շրջանին, նվիրական նկատված է:

Հոն հաստատված էին վանքեր մենակյացներու համար և պատմությունը կհիշատակե, թե հոն այդ վանքերու մեջ, ինչպես Բյուզանդական կայսրության բազմաթիվ մենաստաններու մեջ, ավելորդ է ըսել հունադավան, հայեր գոյություն ունեցած են:

Այսպես, պատմությունն զիտենք, թե Մամիկոնյան հայ կայսրուհին՝ Թեոդորայի իշխանության օրերուն կհիշվին անունները Ողիմպոսի հունական մենաստաններուն հայ ճգնավորներուն:

Թեոդորա իր ամուսինին, Թեոփիլոս կայսեր մահեն հետո, պատկերապաշտության հարեցավ իր խորհրդականին և նախարարին՝ ներքինի Թեոկտեստի խորհրդով, որուն համաձայն էին նաև բազմաթիվ վանականներ, առաջնորդությամբ Մեթոդիոս անուն եպիսկոպոսի մը: Կպատմվի, թե պատկերապաշտության շարժումին իսկական ղեկավարներն էին Ողիմպոս լեռան երեք ճգնավորները՝ Հովհաննիկ, Արշակ և Նսայի, որոնցմե գոնե երկրորդը առանց կասկածի հայ մըն էր: Այս երեք մենակյացներին Հովհաննիկ նախատեսող գուշակի համբավ կվայելեր, վասնզի 855-ին Միքայիլ կայսեր հարսնացուներուն շարքին հիշատակված երկու կապաղովկիացի քույրերին՝ Իրտեն,

համաձայն իր գործակալության, փոխանակ-
կայաներական ծիրանի, վանականի սքեմ կրն-
դունի և կմտնե խրիստոքոլանդ (Ոսկե պարկ)
մենաստանը Ասպարի ավազանին մոտ¹
(Acta Sanct. Iulis, 28, Vol. VI, 602):

Մյուս երկու մենակացներն ալ կթվին ըլ-
լալ ազդեցիկ վանականներ, որոնք Մեթո-
դիոս եպիսկոպոսի միջոցով դիմած են կայս-
րուհին և առաջարկած վերահաստատել
պատկերներու պաշտամունքը (տե՛ս De The-
ophyles Imp. Absolutione Analecta Bysan-
tin, -Russica, էջ 25: Ն. Ադոնց, «Պատմա-
կան ուսումնասիրություններ», Փարիզ,
1948, էջ 444):

Կպատմվի, թե կայսրուհին և ծերակույտը
հարցուցած են Հովհաննիկին, թե ո՞վ է ար-
ժանի պատրիարքական գահուն և ան հանձ-
նարարած է Մեթոդիոսը, մինչ այդ ժամա-
նակ ավելի ժողովրդական էր ուրիշ եպիս-
կոպոս մը՝ Միքայել Կինկելի (Ն. Ադոնց,
նույնը, առնելով Vita Michaelis Syncellis
Izvestia Konst. Instituta, XI, էջ 249, ուս-
սերեն գործեն):

Հավանական է որ Մեթոդիոս հաջողած է
տեղեկերական պատրիարքի աթոռը գրավել
շնորհիվ Թեոդորիտին, որ այս փառասե-
ր եպիսկոպոսը իր կողմը շահած էր զայն, հրա-
պուրելով պատրիարքության խոստովանով (Ն.
Ադոնց, նույն, էջ 444):

Մեթոդիոս, որ աննշան և անարժեք մեկը
չէր, այլ գիտնական անձ մը, Լևոն Հայկազնի
կայսեր օրով պատկերամարտության դեմ
եկած էր: Պահ մը Հռոմ գացած էր և Միքա-
յել Բ-ի ատեն դարձած՝ Կոստանդնուպոլիս,
որ բանտարկված էր 221—228 (Vita Me-
thodii, Migne, P. G, 100, col. 1249, կամ Ն.
Ադոնց, նույն, էջ 444):

Թեոփիլ զայն արձակած էր և պալատին
մեջ պահած: Հոն մտերմացած էր Թեոփի-
լի հետ և դարձած էր ճկունությունը պատ-
կերամարտ և սիրելին կայսեր:

Թեոփիլի մահեն ետք, ազդեցիկ Թեոկրիս-
տին հետ միանալով, կրկին պատկերապաշ-
տության հարեցավ, և իրեն գործակից ունե-
ցավ լեոնան վերոհիշյալ ճգնավորները, ո-
րոնցմե մեկը ապահովաբար հայ, ինչպես
տեսնվեցավ:

¹ Այս մենաստանը կառուցված էր Կոստանդնու-
պոլիս, Ասպարի ավազանին մոտ, որ է այժմ Զուգուր
բոստանը, Քեֆեի մզկիթին մոտ, Էսիրեն Գափուփ մոտ:

Թերևս ուրիշ շատ հայ ճգնավորներ ալ
ապրած են նույն մենաստաններուն մեջ:

Իսկ քաղաքը, որքան որ ալ այն ատեն
աննշան եղած ըլլար, շատ հավանական է,
որ ուներ առավել կամ նվազ թվով հայ բնա-
կիչներ, քանի որ բովանդակ Անատոլուն մեկ
ծայրեն մյուսը լեցուն էր հայերով և գրեթե
չկար քաղաք մը, որ հայ բնակիչներ ունե-
ցած չըլլար:

Ասոր ապացույցները շատ են և ավելի
աննշան քաղաքներ ունեցած են հայ գաղութ-
ներ, նույնիսկ Բրուսայի մոտավոր շրջանա-
կին մեջ, ինչպես էր Նիկիո հունադավան հայ
եպիսկոպոսը Վահան, զոր 862-ին Փոտ պատ-
րիարք իբր պատվիրակ Հայաստան դրկած է
(Զամյան, «Պատմություն հայոց», Բ հատ.,
էջ 685—688):

Այսպես, վավերական վկայություն մը ու-
նինք ապահովաբար ԺԲ դարու վերջերին և
ԺԳ դարու սկիզբին, քանի որ 1204-ին կհիշ-
վի, թե հայկական ստվար գաղութ մը կար
հաստատված Տրովադայի շրջակայքը, այ-
սինքն Բրուսայի արևմտյան կողմը, Դարդա-
նելի նեղուցեն դեպի ասիական կողմը, հին
Տրովադայի շրջակայքը կամ արդի Պիղա-
յի սանջագին մեջ (տե՛ս William Miller²,
Նիկիո կայսրությունը և Կոստանդնուպոլսո
վերագրավումը», «Cambridge medieval his-
tory», IV, 479):

Այս առթիվ խիստ հետաքրքրական է հի-
շատակել, թե Կոստանդնուպոլսո լատին
կայսեր եղբորը՝ Հենրիի հրամանին տակ
գտնվող զորասլուն մը, հրավեր ստացած է
Տրովադա բնակող հայերին, որոնք ըստ
Ուիլյամ Միլլերի, «հավանաբար կպատկա-
նեին լատին հավատքին» (նույն, էջ 481),
ինչ որ շատ անմեկնելի իրողություն մը չէր,
քանի որ այդ հողերը կպատկանեին այդ մի-
ջոցին Կոստանդնուպոլսո լատին կայսրու-
թյան:

Լատին կայսրությունը կործանեցին Պա-
լեոլոգները, 1261-ին, Կոստանդնուպոլիսը
և շրջակայքը կցեցին Բյուզանդական կայս-
րության, որ երկու հայրուր տարիներու օր-
հաս մը ունեցավ, հետզհետե կորսնցնելով
իր հողերը, որոնք կնվաճվեին օսմանցի թուր-
քերեն, մինչև որ 1453-ին իր մայրաքաղաքն
ալ գրավվեցավ և վերջ գտավ:

Այդ գրավված շրջաններն մին էր Բրու-
սան, որ սուլթան Օսման 1326-ին վերջա-
պես գրավեց և իր մայրաքաղաքը ըրավ:

² Դասախոս Օքսֆորդի Հարդֆորդ կոլեջին և պատ-
վակալ անդամ Հունաստանի Ազգային համալսարա-
նին:

Բ. ՀԱՅԵՐԸ ՕՍՄԱՆՅՈՒՆԵՐՈՒ ԳՐԱՎՈՒՄԵՆ ԵՏՔ

Բրուսայի գրավման ատեն տակավին հայ բնակիչները մնացած էին Բրուսայի մեջ, հայտնի չէ: Գուցե թրքական գրավումին սարսափը պատճառ եղած էր մասամբ կամ ամբողջովին անոնց հեռացման, սակայն վստահորեն կրնանք ըսել, թե օսմանյան գրավումն ոչ շատ ետքը, ինչպես օսմանյան տիրապետության ենթարկված ուրիշ քաղաքներու մեջ, հայեր բավական թվով կրնակին Բրուսայի մեջ, գրավումն հազիվ հարյուր տարի ետքը, և ունենին հոգևոր կազմակերպություն:

Բրուսայի հայերը հոն չեն գացած մեկ անգամին:

Գտնված հիշատակարաններն, բերն բերան պատմվածքներն, ընտանեկան ավանդություններն, և մանավանդ մասնավորապես գերեզմանաքարերու արձանագրություններն շատ դյուրին է հետևցնել, թե հայերը Բրուսա եկած են երեք տարեք շրջանակներն:

Ա. Փոքր Ասիայի, ուր շատ կանուխ հայեր հաստատված կային: Ասոնք պարբերաբար բիշ-բիշ Բրուսա եկած են:

Բ. Կիլիկիայի շրջանակն, բայց մասնավոր Սիս քաղաքն:

Գ. Ժե դարուն սկիզբն սկսյալ թուրք և պարսիկ երկարատև պատերազմներու հետևանքը Հայաստանի զանազան մասերն Բրուսայի մեջ տեսնված են գերեզմանաքարեր, որոնց տակ հանգչող հանգուցյալներուն առևեցի, ցուլայեցի, նախիջևնցի, ագուլիսցի, ցղնացի, կիլիկեցի, սսեցի ըլլալը ցույց կուտան:

Այս դաղթականությանց ժամանակամիջոցը որոշելու համար հարկ է պատմության դիմել:

Բրուսա կղզիացյալ անշատ վաղ մը չէ, ընդհակառակը ան Փոքր Ասիո ընդհանուր աշխարհամասին մեկ շրջանակը կգրավեն. հետևաբար պետք է նախ գտնել, թե ե՞րբ Փոքր Ասիա հայեր դաղթած են: Առձեռն գտնված գրավոր հիշատակարաններն հանված տեղեկություններն սա որոշ և հայտնի է, թե եփրատի արևմուտքը հաստատուն հայեր կային ամենահին ժամանակներն սկսյալ, սակայն ասոնց նշանակելի թիվի մը հասնիլը հազիվ թե Ժ դարուն կհասնի: Այդ դարուն մեջ սակայն միայն խարբերդի, Սեբաստիո, և մանավանդ Տավրոսի լեռնակողմերուն մեջ սահմանափակված էին: Արևմտյան Փոքր Ասիո մեջ Բյուզանդական կայսրության երկիրները հաստատված հայերը կրոնական հալածանքներու ենթարկված էին և այս պատճառով կորսված էին մեծ մասամբ, հետևաբար նոր դաղթական-

ներ իրենց նախորդներուն պես դժվարություններու չհանդիպելու համար կգոհանային բյուզանդական երկիրներ դաղթել: Մասնավորապես Բյուզանդական կայսրության մեջ դաղթականներ հողատեր ըլլալու իրավունքն զրկված էին և ճորտություն կատարելու պարտավոր: Տուրքերն ալ շատ ծանր էին, հետևաբար հավանական չէ, որ հայ ստվար դաղթականություններ գոյություն ունեցած ըլլան: Սակայն երբ կհաստատվի Իկոնիո Սելջուկյան սուլթանությունը՝ պայմանները կփոխվեն: Մասնավորապես Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019—1054) կենդանության և անոր մահն ետք Բյուզանդիոնի ընթացքը, որ կրոնական հալածանքներու վերանորոգությունը գուշակելու տար, թելադիր պատճառներ էին հայոց համար բյուզանդական երկիրներն սելջուկյանց երկիրները ապաստանելու:

ԺԱ դարուն մեջ առաջին անգամ Փոքր Ասիո զանազան մասերը հայեր կհաստատվեն, ԺԲ դարուն ընթացքին Իկոնիո շրջակայքը հայեր կբերվեն Մարաշի և Մամուսարի կողմերն, ԺԳ և ԺԴ դարերուն թաթար աշխարհակալություններ արևելյան գավառներու բնակիչներուն կստիպեն վերստին դաղթականության դիմելու և երթալ ստվարացնելու իրենցմե առաջ դաղթողներուն թիվը:

Այսպես, այս չորս դարերու շրջանին է, որ հետզհետե կբազմանան հայ բնակիչներ Տրապիզոնի, Սեբաստիո, Կեսարիո, Իկոնիո, Գաղատիո, Կուտինայի, Բրուսայի, Կոստանդնուպոլսո և այլ մերձավոր քաղաքներու մեջ, ուր հաստատուն բնակության հետքեր գտնվիլ կսկսին այդ թվականներն սկսյալ:

Ամենն գլխավորը այդ փաստերուն՝ նույն քաղաքներու անունով, եպիսկոպոսներու հիշատակությունն է, որոնց կհանդիպինք զանազան առիթներով:

Այն թվականներուն դիտելի է, թե Ընդհանրական Կաթողիկոսության աթոռը Սիս ըլլալով, այդ թեմերուն եպիսկոպոսները Սիսի կաթողիկոսներու իրավասության ենթարկված կամ Սիսն ուղարկված էին:

Ուրեմն Սելջուկյանց իշխանության ներքև գտնված հայերը շարունակ Սիսի աթոռին հետ հոգևոր հարաբերության մեջ էին և հետևաբար Կիլիկիո հայերը գիտակ էին հայոց այդ շրջանակներու մեջ գտած ընդունելության և հաջողության: Հայերը իրենց վաշելած դյուրությունները կպարտեն մասնավորապես իրենց ճարտար ձեռքերուն: Անոնք իբր ճարպիկ գործավորներ և բանվորներ աշխատած էին այն հոյակապ շի-

նություններուն մեջ, զորս Իկոնիոս Ալանդդին սուլթանը (1220—1236) և իր հաջորդները կառուցած էին: Մասնավորապես սելջուկ Ռումի կայսրության երկիրներու մեջ իրենց թիվը զգալապես ավելցած է, այնպես որ երբ Օսմանյան պետութիւնը հիմնվեցավ, երբ Օսմանյան պետութիւնը ունեւր մասնավորապես հախճապակիի արհեստավորներէ բաղկացալ գաղութ մը, որ երբ երկիրը ընդարձակվեցավ, նոր գրաված քաղաքներու մեջ ալ տարածվեցավ: Բրուսան, զոր 1324-ին գրավեց սուլթան Օսման և զայն պետութիւն մայրաքաղաքը ըրավ, չէր կրնար չշահագրգռել հայ արհեստավորները և մանրավաճառները: Ուստի Կուտինայի, Իկոնիայի և Գարամայի հայերեն ոմանք եկած հաստատված են Բրուսա, ինչպես նաև Թավշանլը, Ասարլը և Բիլիշէք:

1375-ին, Ռուբինյանց թագավորութիւնը կործանուածն ետք, այս առաջին գաղթականներու վրա կալելնա կիլիկեցի՝ բայց առավելապես սսեցի գաղթականներու երկրորդ խումբ մը, որ հավանաբար ուղղակի Բրուսա չէ եկած, այլ Անատոլի մեջ քանի մը տեղեր կանգ առած, զանազան ճյուղերու բաժնված, աստ անդ հատվածներ թողուցած է: Անոնցմէ միայն պզտիկ հատված մըն ալ եկած Բրուսա ինկած է: Այս կարծիքը հաստատել կթվին ոչ միայն տապանաքարերը, այլ նաև Հեթում թագավորին օրով գրված գրչագիր Ավետարանները, որ հավանորեն Կիլիկեցի գաղթականներ իրենց հետ բերած էին, և կպահպանին Բրուսայի եկեղեցիին մեջ:

Այս երկու հատվածներու վրա կալելնա ի վերջո երրորդ խումբ մը, Պարսկաստանի Ատրպատական գավառներ, Ագուլիսեն, Նախիջևանեն, Յիլանայեն կամ պարզապես Հայաստանեն եկող գաղթականներու խումբ մը, որոնց հետքերը Անատոլի ամեն մասերուն մեջ կգտնվին:

Մասնավորապես նշանակելի է, թե անեմ-խանէ կկոչվին զանազան քաղաքներու մեջ այն թաղերը, որոնք հայոց բնակավայր եղած են: Պարսից Հայաստանեն գաղթականներ դեպի Փոքր Ասիա եկած են զանազան թվականներու, սակայն մասնավորապես ժն դարուն ամենն ավելի գաղթած են, և հաջորդ երկու դարերու մեջ ալ այդ հոսանքը շարունակված է: Դարձալ հարկ է ըսել, թե այս գաղթականներն ալ ամբողջական և միահամուռ կերպով չեն հաստատված Բրուսա, այլ Անատոլի զանազան մասերը կայաններ ունեցած են և մասնակի հատվածներ միայն եկած բնակած են Բրուսա:

Այս իրողութիւն հայտնի ապացույցներն են. ընտանեկան ինչ-ինչ մականուններ, որոնք

մինչև մեր օրերը պահպան էին և որոնք ցույց կուտային, թե այդ ընտանիքներն նախահայրերն ալ ուրկե՞ն եկած էին: Այսպես Անեմ-օղլու, Մարաշլը-օղլու մականուններն հաճախեալ և գործածական կանուններն էին, Քյոքախա-օղլուներ, Թավշանլը-օղլուներ, Ասարլը-օղլուներ, Մուրադաշլը-օղլուներ, Բիլիշէքի-օղլուներ, Կուտան, թե Բրուսա տեղափոխված էին Փոքր Ասիո զանազան մասերուն մեջ բնակութիւն հաստատող հայերեն փոքրիկ հատվածներ: Բրուսայի մեջ բերն բերան փոխանցվելով պահպանուած ավանդութիւն մը համաձայն Բրուսայի հայերը կկարծեն, թե իրենց նախնիք Հայաստանեն կամ Պարսկաստանեն եկած են Զեյնալի սուլթան Մուհամմեդի (1418—1421) ատեն:

Ավանդութիւնը կհաստատե, թե անոնք ընդամենը յոթը տնվոր էին և արքունի հրամանով սրբավայրերու սպասավորութիւն կոչված: Անոնք իբր թե կապրեին իմարեթի թոշակով:

Բոլոր Բրուսայի շրջակա գյուղերու և ավաններու հայերն ալ իրենց մեջ պահած ըլլալով յոթն տնվորներով հիմնված ըլլալու ավանդութիւնը, տարակուսելի կթվի անոր ճշտութիւնը, մանավանդ Բրուսայի մեջ մինչև 1420-ական թվականները հայեր հաստատված ըլլալը շատ խնդրական է, հավանական է կարծել, թե Զեյնալի սուլթան Մուհամմեդի օրով նոր գաղութ մը եկած է, որ հիշյալ սուլթանը բնակեցուցած է Պոյաճըր Գուլ Քյոփրյուլի ըսված վայրը, իր անունով կառուցված մզկիթին հանդեպ, որուն շինութիւն մեջ աշխատելու եկած էին հայ վարպետները և բանվորները: Այս մզկիթին մեջ, որ արվեստի գեղեցիկ հիշատակարան մըն է, հայերը կրցած են զետեղել արձանագրութիւններ, որոնցմէ կհասկցվի, թե ան իրենց ձեռակերտն է: Մասնավորապես կեռեա, թե մզկիթը բարեգործված է 1427 թվականին (հիշքեթի) և գործ «Դարվեթեցի վարպետ»-ներու, որոնք ապահովաբար հայեր էին³:

Շատ ավելի տրամաբանական և հավանական է կարծել, թե սուլթանը, ի նշան գոհունակութիւն, հրամայած էր այդ քանի մը տուններուն, որ մզկիթին շինութիւն առիթով Բրուսա բերված էին, սահմանել առօրյա ֆոտուլա⁴ այն մզկիթին իմարեթեմ⁵, ստորութիւն մը, որ մինչև վերջերս կպահպար

³ Տե՛ս «Ժողովուրդի ձայն», թիվ 618:

⁴ Ֆոտուլա — հացի տեսակ մը:

⁵ Իմարեթ — կարելի է հասկնալ խոհանոց կամ ձրի ճաշարան, ուրկի ճաշ կհայթայթին կարոտյալներուն:

և այդ քանի մը տուններուն, ով որ ալ ըլլային հոն բնակողները, կտրվէր ֆառուլան:

Կարծողներ կան, թե Պոյաճը-Գուլ-Քյուփ-ըյուսի անունը այն հայ արհեստավորներուն հախճապակիի ներկարարներ ըլլալեն առնված է և անկե կոչված է վայրը ներկա-րար ծառայի կամուրջ: Չկեպի սուլթան Մուհամմեդի հրամանով այս հայ վարպետներուն և գործավորներուն Բրուսա հաստատվելն առաջ քաղաքին մեջ հայեր կային: Հայոց առաջին բնակավայրն էր Արապա-յաթաղը թաղը և իրենց հնագույն գերեզմանատունը՝ Մեհա-Երի, որոնք քաղաքին արեւմտյան հարավային կողմերը կգտնվէին:

Այս թաղին մեջ էր հայերու հնագույն եկեղեցին՝ Ս. Լուսավորիչ, որ կառուցված էր հալանորեն թրքաց տիրապետութենէն (1314) կամ 1375-ի Կիլիկիայէն մեկնող գաղթականներու Բրուսա եկող հատվածին հոն հաստատվելէն քիչ ետք: Այս եկեղեցին դեռ գոյութիւն ունի 1661-ին, վասնզի այդ թվականին կհիշվի հին ու խաբիսուլ եկեղեցի մը նույն թաղին մեջ, որուն անառողջապահիկ հանգամանքը և դիրքը նկատի առնելով, այս թաղի բնակիչները կխնդրեն Չեկպի սուլթան Մուհամմեդին իրենք ալ տեղափոխվի իր ձեռքով բերված հայ գաղթականներու հաստատված Պոյաճը-Գուլ-Քյուփ-ըյուսի թաղը, որ կգտնվի ստորոտն Բրուսայի լավագույն թաղին՝ Սեք-Բաշիի, դեպի ուր հայերը կամաց-կամաց կտեղափոխվին:

Հնագույն Արապա-յաթաղի բնակիչներու մեկ մասն երբ սուլթան Մեհմեդ Չելեպիի հրամանով իրենք ալ արտոնութիւն ստացան Պոյաճը-Գուլ-Քյուփ-ըյուսի փոխադրվելու, այն ատեն հայերը մեծամասնութիւն կազմեցին Սեք-Բաշիի շուրջը և վերջերք գրեթէ ամբողջութեամբ հոն ամփոփվեցան:

Այս շրջանին մեջ հայերը կունենան երկու եկեղեցի ևս: Անոնցմէ առաջինը՝ Ս. Գևորգ, հալանորեն շինված է Պոյաճը-Գուլ-Քյուփ-ըյուսի և Սեք-Բաշիի կողմերը հայոց ստվարանալէն հետո, այսինքն ժէ դարուն առաջին քառորդին մեջ:

Այս եկեղեցիէն հիշատակ կմնար մինչև տեղահանութեան թվականը սկիզբ մը, որ ժն դարուն կեսերը (1452 թվականով) Ս. Գևորգ եկեղեցիին նվիրված էր: Այս եկեղեցիի տեղը, որ Բրուսայի հայերը ավանդաբար ցույց կուտային, կգտնվէր Սեք-Բաշիի մեջ: Այս գետինին մեջ գտնված են քանի մը տապանաքարեր և խաչքարեր, որոնցմէ մեկը կկրբեր սա արձանագրութիւնը. «Յիշատակ է Սսեցի Պեկիմ, ՊՁԹ» (1440), ինչ որ ցույց կուտա նույն թվականին եկեղեցիին գոյութիւն ունենալը:

Ժէ դարուն սկիզբը՝ 1609-ին, երբ Սիմեոն դպիր Լեհացի Բրուսա կայցելէ, հոն հայերը ունին միայն «փայտե ժամատնակ մի», («Ուղեգրութիւն», էջ 33-35), որ ապահովաբար այս եկեղեցին էր:

1641-ին, Կիրակոս Արևելցի պատրիարքին այցելութենէն քիչ ետքը, թուրքերը մոլեռանդութեամբ քանդած են այս եկեղեցին, որ հաջորդ տարին վերաշինված է: 1661-ին, Եղիազար Այնթաբցիի ժամանակ, Ս. Լուսավորիչ եկեղեցիին հետ այս եկեղեցին ալ կհիշվի, սակայն հալանորեն քիչ հետո հայերը կհարկադրվին լքել այս եկեղեցին:

Իսկ երկրորդ եկեղեցին՝ Ս. Աստվածածիճ, հալանորեն շինված պետք է ըլլա ավելի ուշ՝ ԺՁ դարուն մեջ: Այս եկեղեցին նորագած է նախ Աթանաս եպիսկոպոսը 1617-ին, ինչպէս ցույց կուտա ճաշոցի մը հիշատակարանը, և ապա՝ Եղիազար Այնթաբցի, որ 1661 նոյեմբեր 16-ին «մեծապաշտօն հիմնարկութեամբ» կնորոգեց այս եկեղեցին, «հանդերձ հարաւային վանքովն և հիւսիսային վերնատնին և աղբեր ջրոյն, որ հոսի յաջ և ահեակ սրբոյ եկեղեցոյս»:

Այս հիշատակարանները ցույց կուտան, թե Եղիազար Այնթաբցի բոլորովին նոր եկեղեցի մը չէ շինած, այլ գտնված եկեղեցին նորոգած է:

1783-ին այս եկեղեցին, որ փայտաշէն էր, չափազանց հինցած էր, ուստի կձեռնարկվի վերանորոգել: 1794-ին սակայն հաղիվ կարելի կըլլա գործի սկսիլ: Նույն տարվուն մարտ 26-ին հիմնարկութիւնը կկատարվի և ապրիլ 8-ին՝ Զատիկ Ճրագալույցին, տանիքը կծածկվի և տասը օր հետո՝ ապրիլ 18-ին, նոր Կիրակի օրը, տակավին շինութիւնը չէր ավարտած, երբ թուրքերը դիտմամբ կայրեն այս եկեղեցին: Պողոս եպիսկոպոս Գարագաշ անվհատ համբերատարութեամբ մը նույն տարին, սեպտեմբերին, դարձյալ շինութեան կձեռնարկե և նոյեմբերին կհաջողին ավարտել: Այս շէնքն ալ այրած է 1863-ի հրդեհին:

6 Հետաքրքրական է ավելցնել, թե 1620—1635-ի միջոցներուն ալ Բրուսայի հայոց եկեղեցիներէն մեկը թուրքերը քանդած են, սակայն որոշ հայտնի չէ թե ո՞րը: Հալանական է կարծել, թե այդ եկեղեցին պիտի ըլլա հնագույնը, այսինքն Ս. Գևորգը կամ Ս. Աստվածածինը, որ 1617-էն հետո անգամ մըն ալ զոհ գացած կըլլա թրքական մոլեռանդութեան: Այս տեղեկութեան աղբյուրն է Գրիգոր Դարանաղցի, որ Էտրեն Գափուի Ս. Նիկողոս եկեղեցւուն թուրքերու կողմէ գրավման վրա խոսած ատեն անոր թելադիր ցույց կուտա ժամանակին մյուսքիւն և անոր որդին: Այս առթիւ մասնավորելով խոսքը տղուն վրա, կըսէ, թե «զՊուրոսայու ժամատնոն խափանեաց և իրեանց նայիպն այլ զմեր հին եկեղեցոյն պատճառ եղև կործանման» (տե՛ս «Ժամանակագրութիւն», էջ 516):

և անոր տեղը կառուցված է 1866-ին Գևորգ եպիսկոպոսի (հետո կաթողիկոս) ձեռքով Բրուսայի հայոց հույակապ միակ եկեղեցին։

Բրուսայի հայ գաղութը թուրք խուժանի խիստ ճնշման տակ գտնված է, ինչ որ կհաստատվի 1641-ին Ս. Գևորգ և 1794-ին՝ Ս. Աստվածածին եկեղեցիներում վրա խուժանի կատարած հարձակումներով և քանդումներով։ Մինչև տեղահանություն կպահվեին կարգ մը հրովարտական, որոնք կարտոններին շալ Եկեղեցվո աբարողությունը և պաշտամանը անխափան կատարումը, ինչ որ փաստեր են, թե անոնք իսլամ մոլեռանդության կողմն երբեմն արգելքի կենթարկվեին։

Այսպես պահված էր Քրիստոսի 1594 թվականին շնորհված հրովարտակ մը, որով հայերը կարտոնվեին եկեղեցիին մեջ իրենց սեփական լեզվով «հայհոյել»-ու։

1641-ին, երբ իսլամ մոլեռանդներու կողմն կքանդվի Ս. Գևորգ եկեղեցին, կերևա, թե ոչ միայն եկեղեցվո շինությունը, այլ հայ լեզվով պաշտամունքին կատարումը կհանդիպի մեծ դժվարության, և ո՞վ գիտե հայերը ինչպիսի ջանքերով կհաջողին 1647-ին ձեռք բերելու երկրորդ հրովարտակ մը, որ կհաստատեր 1594-ի արտոնությունները։

Իսլամ մոլեռանդ խուժանը, որ չէր հանդուրժեր եկեղեցիներն ներս իսկ հայ բարբառին գործածությունը, բնական է, որ երբեք պիտի չհանդուրժեր անոր առօրյա գործունեության սովորական կյանքին մեջ։ Հետևաբար Բրուսայի հայերը բռնի դարձած են թրքախոս, ազատվելու համար թրքական սարսափեն, որ շարունակ կճնշեր։ Բրուսայի մեջ տիրող մըթ-նոլորտը բացատրելու և հակաքրիստոնյա հոգիին որքան տարածված ըլլալը պարզելու համար կբավի ըսել, թե Բրուսան այն վայրերն է, ուր ամենեն ուշ, հազիվ 1906—1907 թվականներում կարելի եղած է կոշնակը դանգակի փոխել, այդքան հակառակ էին տեղվույն թուրքերը քրիստոնյաներուն և անոնց կրոնը հիշեցնող բաներուն դեմ։

Այս պատճառով, երբեք մեղադրելի չէ, երբ Բրուսայի հայերը դարձած են թրքախոս, մինչ շրջակա հայ բնակչությունը մեծավ մասամբ պահած էր իր մայրենի լեզուն բացի Ենի-Շենիթեն, որուն հայ բնակիչները հավանորեն Բրուսայեն գաղթած էին։ Իսկ շրջակա հայախոս գյուղերը Ժէ դարուն սկիզբը Հայաստանի և Փոքր Ասիոյ մեջ ջեղախնդրու հարուցած խառնակության հետևանքով կոստանդնուպոլիս, Թրակիա և Նիկոմիդիոյ շուրջը խույս տվող հայ գաղթականության մասերն են, և ժամանակով բավական կրտսեր են Բրուսայի գաղութին, ինչ որ պատճառ մըն էր անոնց նվազ թրքական մոլեռանդության հետևանքները կրելուն։

Այսպես, Բրուսայի առաջնորդության ենթակա երբեմնի հայաբնակ վայրերն են Ենի-Շենի հայերը գիտեն, թե ԺԶ դարուն վերջերը էրզրումի կողմերեն յոթը տնվոր եկած, գյուղեն քառորդ ժամ հեռու էտեբեյ գյուղը աղեն քաղած են իրենց մայրենի արվեստով։ Իսկ զբաղած են իրենց մայրենի արվեստով։ Բալը բելը տեսնելով անոնց մըջնաջան աշխատությունն ու վտարանդի կյանքը, պաշտոնական թափուով, ընդարձակ ու սահմանավոր վայր մը կնվիրե, ուր եռանկյունաձև դիրքով կշինեն իրենց տնակները, որոնց հնությունները հոս կցկտուր կգտնվին⁷։

Նման պայմաններով և նույն ժամանակամիջոցներուն հաստատված են հավանորեն նաև Սյուեզի, Ջերմանի, Մարմարեզգի, Քարսաֆի և Կյուրեյի հայ գաղութները, որոնց նախնական բնակավայրերը և գաղթականությունը որոշ թվականը բացարձակապես և ստույգ վավերագիրներով ճշտել կարելի չէ, սակայն, կենդանի մնացած ավանդությանց համաձայն, սյուեզցիք կկարծվին գաղթած ըլլալ Աբուլեխեն⁸, շերրահցիք՝ Պարսկաստանեն, ըստ Հ. արքեպիսկոպոս Արշարունիի՝ Սալմաստի և խոյի շրջանեն, բենլիցիք՝ խարբերդի Մովթ գյուղեն⁹, քարսաֆցիք և Կյուրեյցիք՝ Վանեն և Ակենեն¹⁰, իսկ մարմարեզցիք բնավ չեն պահած իրենց մեջ որե՛ն ավանդություն։

Այս գաղութները, որոնք ունին 250—300 տարվան հնություն, երբեմն մեկե ավելի գաղութներ ընդունած են, այնպես որ տեղական ավանդությունները կրնան շատ անգամ իրականության հետ շատ համապատասխան չլլալ։

7 Բիւրակն, 1896, էջ 866, Հովհաննես աբեպիսկոպոս Արշարունի կկարծե, թե Ենիշենի հայերը խարբերդեն եկած են։

8 Տե՛ս «Արեւիկ», Թ. 4796, Վ. Գուրեն իր աշխարհագրության մեջ կվկայե, թե սյուեզցիք գաղթած են Վանեն և խարբերդեն Ժէ դարուն, քուրդերու ճնշումն ազատվելու համար։ Ազգային ավանդությունը և այս օտար վկայությունը իրարու հետ կհաշտվին, եթե նկատի առնենք, որ մեր ապուշխցիք, ինչպես Ակնա բուր շրջակայքը, Վանա գաղութ են և Ակն շատ հեռու չէ խարբերդեն և անոր ենթակա քաղաք մըն է։

9 Հավանական է կարծել, որ երկու տեղերն ալ նկատ են կամ իրենց ծագման մասին պահված ավանդությունը պահած ըլլա երկու վայրերուն անունները սա հիման վրա, որ Ակն ալ արդեն Վանա գաղութ մըն է։

10 Ավանդություն մը, չենք գիտեր որքան հիմնավոր, գյուղի հիմնադիրներուն հոն գալուն պատճառ ցույց կուտա քուրդ աղջկան մը առևանդումը։

(Շարունակելի)